ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

<<12>> հունիս 2024թ

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
հ/հ 900438000318

ՈՐՈՇՈՒՄ

02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-3-Խ* ծածկագրով պայմանագիրը միակողմանի և մասնակի լուծելու մասին.

ՊԱՐԶԵՑԻ

02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման պայմանագիր՝ *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-3-Խ* ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների՝ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին և «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ն պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքները, մասնավորապես, ձեռքի թղթե սրբիչներ, ավել սենյակի, ավել զոգաթիակով,ապակի լվանալու ձողափայտ գլխիկով և սպիտակեցնող հեղուկ, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես՝ պայմանագրի առարկան՝1.1կետը/:
«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվել են հայտեր և դրանցով սահմանվել են ժամկետներ՝ տեխնիկական բնութագրով սահմանված սպիտակեցնող հեղուկ մատակարարելու վերաբերյալ:

02.02.2024թվականից մինչև 12.06.2024թվականը «Վաճառողը» «Գնորդին» առհասարակ սպիտակեցնող հեղուկը չի մատակարարել,իսկ տեխնիկական բնութագրով նախատեսված մյուս ապրանքները համաձայն հայտերի դեռևս շարունակվում են մատակարարվել:

Նույն պայմանագրի 8..9 կետի դրույթների համաձայն Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝նշելով հրապարակման ամսաթիվը:Վաճառողը,պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը,սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմված և ուղարկված հայտերի համաձայն չի մատակարարվել պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ սպիտակեցնող հեղուկ, ուստի ղեկավարվելով վերոգրյալից և պայմանագրով սահմանված էական պահանջներից.

ՈՐՈՇԵՑԻ

02.02.2024թվականին 02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-3-Խ* ծածկագրով պայմանագիրը:

2/Օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «ԱրմՎիլ Գրուպ» ին՝ պայմանագրի լուծման վերաբերյալ :

3/Կատարել մատակարարման պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Հարգանքով՝

Տնօրեն Հ. Բալասանյան

Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60
Էլ.հասցե՝ kharberd-mankatun@mail.ru

Ararat Marz, Nor Kharberd
☎ 0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60
e-mail: kharberd-mankatun@mail.ru